ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՆԵՐՔԻՆ ԱՈՒԴԻՏԻ ԲԱԺՆԻ ԿՈՂՄԻՑ 2014Թ.-Ի ՆԵՐՔԻՆ ԱՈՒԴԻՏԻ ԾՐԱԳՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Վայոց ձորի մարզպետարանի ներքին աուդիտի 2014թ.-ի տարեկան ծրագրի շրջանակներում ներքին աուդիտի բաժնի կողմից նախատեսվել և իրականացվել է 43 աուդիտ, որից 24 միավոր մարզային ենթակայության Հանրակրթական ՊՈԱԿ-ներում, 1 միավոր մարզային ենթակայության <<Եղեգնաձորի Երկրագիտական թանգարան>> ՊՈԱԿ-ում, 8 միավոր մարզային ենթակայության առողջապահական ՓԲԸ-ներում, 9 միավոր <<Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմ>> ՊԿՀ ստորաբաժանումներում, 1 միավոր մշակույթային միջոցառումների մասով: ՊՈԱԿ-ներում,ՓԲԸ-ներում իրականացվել է ֆինանսական աուդիտ ,մարզպետարանի աշխատակազմում՝ստորաբաժանումների գործունեության համապատասխանության, գնումների գործընթացի գնումների օրենսդրությանը համապատասխանության աուդիտ: Նշված ՊՈԱԿ-ներում, ՓԲԸ-ներում, մարզպետարանի աշխատակազմի ստորաբաժանումներում, մշակույթային միջոցառումների մասով աուդիտի ստանդարտների համաձայն,այդ թվում բավարար տեղեկությունների փաստաթղթային ստացման հիման վրա, փաստացի իրականացվել է աուդիտ և կազմվել աուդիտի հաշվետվություն: Հաշվետվությունները ներառել են աուդիտի ընդհանուր նկարագիրը, գտնվելու վայրը, գործունեության իրավական հիմքերը, գործունեության շրջանակները, խնդիրները, աուդիտի արդյունքները, եզրահանգումները, առաջարկությունները, հանձնարարականները: Իրականացվել են ֆինանսական հաշվետվություններում, ֆինանսական բնույթի տեղեկություններում արտահայտված տվյալների արժանահավատության գնահատում, ֆինանսական գործառույթների առանձին տեսակների օրինականության ստուգում, հաշվապահական հաշվառման գրանցումներում արտացոլված տվյալների արժանահավատության գնահատում: Աուդիտի ընթացքում աուդիտի են ենթարկվել ֆինանսական կառավարմանը, ներքին հսկողությանը, գործունեության իրավական ակտերին համապատասխանությանն առնչվող բոլոր գործառույթները: Հրավիրվել է Ներքին աուդիտի կոմիտեի 10 նիստ, քննարկվել աուդիտի հաշվետվությունները, կայացվել համապատասխան որոշումներ: Աուդիտի ենթարկված ՊՈԱԿ-ների, առողջապահական ՓԲԸ-ների և մարզպետարանի համապատասխան ստորաբաժանման ղեկավարին տրվել են հանձնարարականներ, ներկայացվել առաջարկություններ արձանագրված թերությունների և խախտումների վերացման ուղղությամբ: Միաժամանակ այդ ուղղությամբ ներքին աուդիտի բաժնի կողմից իրականացվել է վերահսկողության գործընթաց:

Աուդիտի հաշվետվությունները տեղադրվել են Վայոց ձորի մարզպետարանի vdzor.gov.am պաշտոնական կայքում՝ ստուգումների արդյունքներ բաժնում:

Ներքին աուդիտի բաժնի կողմից ամբողջությամբ կատարվել է 2014 թ.-ի ներքին աուդիտի ծրագիրը:

Հաշվետվությունները, համաձայն ՀՀ ֆինանսների նախարարի 17.02.2012թ.-ի թիվ 143-Ն հրամանի, մուտքագրվել են ներքին աուդիտի տեղեկատվական միասնական համակարգ:

Ներքին աուդիտի բաժնի պետ՝ **Վ. Կարապետյան**